8194	2.3.1.1. Համայնքի բյուջեի վարչական մասի տարեկիցի ազատ մնացորդ՝ հաշվետու տարվա հունվարի 1-ի	9321	9 994 323,5	9 994 323,5	X	10 452 899,5	10 452 899,5	X	10 452 841,6	10 452 841,6	X				

8196	2.3.2. Համայնքի բյուջեի ֆինդային մասի միջոցների տարեկան մնացորդ (տող 8197 + տող 8200)	9330	56 077 709,6	0,0	56 077 709,6	56 077 709,6	0,0	56 077 709,6	56 077 684,2	0,0	56 077 684,2
8197	- արանց վարչական մասի միջոցների տարեկան պատ մնացորդից ֆինդային մաս մուտքագրման ենթակա գումարի		47 636 083,1	X	47 636 083,1	47 636 083,1	X	47 636 083,1	47 636 115,6	X	47 636 115,6
8198	Համայնքի բյուջեի ֆինդային մասի տարեկան պատ մնացորդ՝ հաշվետվու տարվա հունվարի 1-ի	9331	47 636 083,1	X	47 636 083,1	47 636 083,1	X	47 636 083,1	47 636 115,6	X	47 636 115,6
8200	- վարչական մասի միջոցների տարեկան պատ մնացորդից ֆինդային մաս մուտքագրման ենթակա գումարը		8 441 626,5	X	8 441 626,5	8 441 626,5	X	8 441 626,5	8 441 568,6	X	8 441 568,6
8203	2.6. Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում (տող 8000- տող		0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	-60 616 739,1	-57 313,0	-60 559 426,1



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2017 թվական N17 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի N40-Ա ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 70-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ համայնքի ավագանու 2015 թվականի հուլիսի 10-ի N23-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N40-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (10)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ

ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ


ԴԵՄ(0)

ՁԵՈՆԱՊԱՏ(0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. փետրվարի 28

ք. Մեղրի




Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի
Ավագանու <<28>> 02 2017թ.
թիվ N 8-Ա որոշման


**<<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ
ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ,
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ**

1. Աշխատակիցների թվաքանակ՝ 37

2. Հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափեր՝

Հաստիքի անվանումը	Հաս- տիքային միավոր	Դրույքաչափը ՀՀ դրամ	Հավելավճ ար	Ամսական աշխ.	Ընդ. տարեկ ան աշխ. ֆոնդը
Վարչական միավորներ					
Տնօրեն	1	122000-00	0	122000-00	1464000-00
Փոխտնօրեն ուսումնական աշխատանքների գծով	1	89405-00	0	89405-00	1072860-00
ԸՆԴԱՄԵՆԸ	2			211405-00	2536860-00
Մանկավարժական դրույքներ					
Դասատուներ	33,7	77903-00	0	2547429-00	30569148-00
Դասատու	1	77903-00	50000-00	127903-00	1534836-00
ԸՆԴԱՄԵՆԸ	34,7		50000-00	2675332-00	32103984-00
Հաշվապահ	0,8	77903-00	0	58200-00	698400-00
ԸՆԴԱՄԵՆԸ	1		0	58200-00	698400-00
Սպասարկող անձնակազմ					
Հանդերձապահ	0,5	77903-00	0	38952-00	467412-00
Գործավար	1	77903-00	0	77903-00	934836-00
Հավաքարար	1	77903-00	0	77903-00	934836-00
Բանվոր	1	77903-00	0	77903-00	934836-00
Գրադարանավար	0,5	77903-00	0	38952-00	467412-00
ԸՆԴԱՄԵՆԸ	4		0	311612-00	3739344-00
ԸՆԴԱՄԵՆԸ	41,7		50000-00	3256549-00	39078588-00

Դպրոցի տնօրեն  Մարկոսյան/

Հաշվապահ  Մարկոսյան/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Մ. ԶԱՔԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2017 թվական N18 -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՈՒ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 41-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Սահմանել՝

1.1 «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները» (հավելված 1):

1.2 «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) չափորոշիչները» (հավելված 2):

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (10)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ

ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԴԵՄ(0)


ՁԵՈՆԱԿԱՅ(0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. փետրվարի 28

ք. Մեղրի



2017 թվականի փետրվարի 28-ի

N18-Ն որոշման

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱՔԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով (այսուհետ՝ Կանոններ) սահմանվում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի (այսուհետ՝ Համայնք) վարչական տարածքում արտաքին գովազդի (այսուհետ՝ գովազդ) տեղաբաշխման (տեղադրման) կարգը: Կանոնները ընդունվել են «Գովազդի մասին» ՀՀ օրենքին համապատասխան:
2. Արտաքին գովազդը (այսուհետ՝ գովազդ) իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն է բնակավայրերում գովազդի միջոցներով (վահանակների, գրաժապավենների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների և այլն) անորոշ թվով անձանց շրջանում և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:
3. ՀՀ կառավարության 2002թ. մարտի 19-ի հ. 270 որոշման պահանջներին համապատասխան տեղադրվող ցուցանակների վրա զետեղվող տեղեկատվությունը արտաքին գովազդ չի համարվում: Արտաքին գովազդ են համարվում «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) չափորոշիչներով» (այսուհետ՝ Չափորոշիչներ) սահմանված մակերեսից ավելի մակերեսով տեղադրվող ֆիրմային նշանները և գովազդվող ապրանքանշանները:
3. Կանոնները տարածվում են բոլոր այն տարածքների և տրանսպորտային միջոցների վրա, որտեղ պետք է տեղադրվի արտաքին գովազդը:
4. Պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա գովազդի միջոց տեղադրելու համար ՀՀ հողային օրենսգրքով սահմանված կարգով Համայնքի ղեկավարի որոշմամբ տրամադրվում է համապատասխան հողամաս՝ ՀՀ հողային օրենսգրքի համաձայն հատկացված հողամասը օգտագործման իրավունքով դիմում ներկայացրած գովազդատուին (գովազդակրին) հանձնելու՝ միաժամանակ կնքելով հողօգտագործման համապատասխան պայմանագիր, հետագայում տվյալ կողմի հետ նախապատվության իրավունքով երկարացնելու պայմանով:
5. Այն դեպքում, երբ գովազդի միջոցը տեղադրվում է պետական սեփականություն չհանդիսացող տարածքում (կամ դրանց օգտագործմամբ), ապա գովազդի միջոցի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվությունը (կից Ձևը) (այսուհետ՝ թույլտվություն), տալիս է Համայնքի ղեկավարը՝ տվյալ տարածքի սեփականատիրոջ կամ տարածքի օգտագործողի համաձայնության առկայությամբ: Ընդ որում, գովազդատուի (գովազդակրի) և տարածքի սեփականատիրոջ միջև հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերով:
6. Գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համար հողամասի հատկացման որոշումներում և հաշվի են առնվում ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի (այսուհետ՝ Բաժին) համաձայնությունը:

7. Սիզամարգերում և այլ կանաչ տարածքներում բարեկարգման տարրերի, ինչպես նաև էլեկտրասյուների հետ առնչվելու ու մայրուղիների և փողոցների երթևեկելի մասի կենտրոնական-բաժանարար գոտիներում գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համար հաշվի է առնվում Բաժնի համաձայնությունը:

8. Համայնքի բնակավայրերի արտաքին տեսքի պատշաճ ձևավորման նպատակով Չափորոշիչներին և Կանոններին համապատասխան Բաժնի, ինչպես նաև Համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարների առաջարկների հիման վրա Համայնքի ղեկավարը՝

8.1. հաստատում է Համայնքի վարչական տարածքում գովազդային վահանակների տեղադիրները:

8.2. սահմանում է այն կոնկրետ տեղադիրները, որտեղ չի թույլատրվում արտաքին գովազդի տեղադրումը:

9. Գովազդի տեղադրումը թույլատրվում է, եթե այն համապատասխանում է «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, Չափորոշիչների և Կանոնների պահանջներին:

ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

10. Գովազդի տեղադրման թույլտվությունը (հետագայում՝ թույլտվություն) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն և Կանոններով սահմանված կարգով տրվում է Համայնքի ղեկավարի կողմից:

11. Գովազդային միջոց տեղադրելու համար գովազդատուն (գովազդակիրը) հայտ է ներկայացնում Համայնքի ղեկավարին՝ նշելով իր անունը, գտնվելու վայրը, գովազդի տեղադրման վայրը և ժամկետը, ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները:

Հայտին կցվում է համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, գովազդի տեղադրման ձևը (վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները:

12. Համայնքի ղեկավարի աշխատակազմը գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատուից (գովազդակրից) հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պարզում է գովազդային միջոցի համապատասխանությունը Չափորոշիչների և Կանոնների պահանջներին (եթե այն թերի է, հետ է վերադարձվում թերությունը վերացնելու և նորից 15-օրյա ժամկետում ներկայացնելու համար), և 15 օրվա ընթացքում համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվություն, որում նշվում են՝ գովազդատուի (գովազդակրի) անվանումը, գովազդի չափերը, տեղաբաշխման (տեղադրման) ձևը, գովազդային նյութերի անվանումը, թույլտվության գործողության ժամկետը:

13. Կանոնների 4-րդ կետին համապատասխան հատկացված տարածքի նույն հասցեում գովազդ տեղադրելու համար մեկից ավելի գովազդատուների (գովազդակիրների) հայտերի առկայության դեպքում Համայնքի ղեկավարը «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն հայտարարում և անց է կացնում մրցույթ, որի արդյունքներով մրցույթի հաղթողին տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն:

14. Թույլտվությունը հանդիսանում է հաշվառման փաստաթուղթ, որը գրանցվում է համայնքի թույլտվությունների հաշվառման մատյանում, իսկ թույլտվության պատճենը և հաշվառման մատյանը պահվում են համայնքի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում:

15. Գովազդի միջոցի տեղադրման վերաբերյալ գովազդատուի (գովազդակրի), հայտը 15-օրյա ժամկետում կարող է մերժվել այն դեպքում, եթե՝

15.1. ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Չափորոշիչների և Կանոնների պահանջներին:

15.2. խախտվում են «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ այլ իրավական ակտերի պահանջները:

15.3. գովազդի միջոցի տեղադրմամբ խոչընդոտվում է ճանապարհային երթևեկությունը կամ քաղաքացիների անցուդարձը, խախտվում են անձանց օրենքով պաշտպանված իրավունքներն ու շահերը:

16. Գովազդային միջոց տեղադրելու հայտը մերժելու վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:

17. Գովազդային նյութերը գովազդային միջոցների վրա տեղադրելու ժամանակ, ինչպես նաև արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխման դեպքում, գովազդատուն (գովազդակիրը) մինչև գովազդային նյութերի տեղադրումը կամ արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխումը, այդ մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կից ներկայացնելով համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի էսքիզը, որտեղ նշվում են նաև գովազդի արտաքին չափերը: Գովազդի էսքիզը համաձայնեցվում է Մեղրի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի հետ:

18. Գովազդը պետք է համապատասխանի «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի, Չափորոշիչների, Կանոնների և ՀՀ այլ իրավական ակտերի պահանջներին:

19. Գովազդի տեղադրման միջոցի մոնտաժային աշխատանքները կատարվում են հայտատուի պատվերով՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և Բաժնի հետ համաձայնեցված նախագծով: Արտաքին գովազդի միջոց տեղադրելու համար գովազդակիրն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գովազդի տեղադրման միջոցի մոնտաժման ապահովության և դրա անվթար շահագործման համար:

20. Գովազդատուն (գովազդակիրը) իրավասու չէ արտաքին գովազդի տեղադրման համար իրեն տրված թույլտվությունը փոխանցել կամ օտարել այլ անձի:

21. Գովազդի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվության ժամկետը լրանալու կամ երկարացնելու, պայմանագրով նախատեսված հիմքերով այն վաղաժամ դադարելու (լուծելու) դեպքում գովազդատուն (գովազդակիրը) պարտավոր է ողջամիտ ժամկետում իր միջոցներով ապամոնտաժել գովազդը և դրա տեղաբաշխման միջոցները, իսկ զբաղեցրած տարածքը բերել նախկին վիճակին:

22. Կանոններով նախատեսված պարտավորությունը գովազդատուի (գովազդակրի) կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Համայնքի ղեկավարի որոշման համաձայն գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժումն իրականացվում է Համայնքի կողմից՝ օրենքով սահմանված կարգով գովազդատուից (գովազդակրից) ստանալով համապատասխան փոխհատուցում:

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

23. Համայնքի ավագանին համայնքի վարչական տարածքում յուրաքանչյուր տարվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքի դրույքաչափերը սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

24. Այն դեպքում, երբ թույլտվության և պայմանագրի գործողության ընթացքում գովազդվող տեղեկատվությունը փոփոխվում է, որի համար օրենքով նախատեսված է տեղական տուրքի այլ դրույքաչափ, գովազդատուն (գովազդակիրը) վճարումը կատարում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքի ավագանու կողմից հաստատված համապատասխան դրույքաչափերով:

25. Կանոններով նախատեսված հողօգտագործման վճարի չափը սահմանվում է Համայնքի ավագանու կողմից:

26. Գովազդատուի (գովազդակրի) կողմից անբարեխիղճ գովազդ թույլ տալու դեպքում՝ Համայնքի ղեկավարը գովազդի մասին օրենսդրության խախտման դադարեցման և հակագովազդի իրականացման վերաբերյալ գրավոր նախազգուշացնում է գովազդատուին (գովազդակրին) և այդ մասին Մեղրի համայնքի համապատասխան բնակավայրի վարչական ղեկավարին տեղեկացնում է 10-օրյա ժամկետում:

27. Գովազդատուները (գովազդակիրները) իրավասու են օրենքով սահմանված կարգով դատական կարգով բողոքարկել գովազդի տեղաբաշխման (տեղադրման) կապակցությամբ Համայնքի ղեկավարի որոշումներն ու գործողությունները:

29. Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) գործընթացի և գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է Համայնքի ղեկավարը:

30. Գովազդային օրենսդրության պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ)**

Թ Ո Ւ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն N ____

Տրվում է _____

գովազդատուի և (կամ) գովազդակրի անվանումը

_____ արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) վայրը (տեղը)

_____ արտաքին գովազդ տեղաբաշխելու (տեղադրելու) միջոցը
(վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պաստառ և այլն)

_____ գովազդի տեսակը

_____ գովազդային նյութի անվանումը

Գովազդի մակերեսը _____ քմ

Թույլտվության գործողության
ժամկետը՝

«__» _____ 20__թ.

առ՝ «__» _____ 20__թ.

Կ.Տ.

Մեղրի համայնքի ղեկավար՝ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ.ԶԱՔԱՐՅԱՆ

2017 թվականի փետրվարի 28-ի

N18-Ն որոշման

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ) ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի (այսուհետ՝ Համայնք) վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) չափորոշիչները (այսուհետ՝ Չափորոշիչներ), մշակվել են «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնների» (այսուհետ՝ Կանոններ) համապատասխան:

2. Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի միջոցների (այսուհետ՝ գովազդ) տեղաբաշխումը (տեղադրումը) թույլատրվում է Կանոնների և Չափորոշիչների պահանջներին համապատասխան:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Արտաքին գովազդի միջոց են համարվում Համայնքի վարչական տարածքում տեղադրվող գովազդային տեղեկատու կրողները՝ անկախ շենքերի, շինությունների և հողամասերի սեփականության ձևից: Դրանց թվում են՝ վահանակային կայանքները (վահանակները), տանիքային կայանքները, մեծանկարները (պաննո), էլեկտրոնային էկրանները, ցուցանակները, բարձակները, ցուցատախտակները, շենքերի մուտքերի և պատուհանների հովհարները (մարկիզ), գրաժապավենները (տրանսպարանտ) և այլն:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ) ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Գովազդի տեղաբաշխմանը (տեղադրմանը) ներկայացվող պահանջները՝

1.1 Համայնքի վարչական տարածքում գովազդը և դրանց առանձին մասերը չեն կարող տեղաբաշխվել (տեղադրվել) երթևեկելի մասի մակերևույթից 6 մ-ից ցածր բարձրությամբ եզրաքար չունեցող ճանապարհի կողքին, հողեզրից 3 մ -ից պակաս հեռավորության վրա:

1.2 Գովազդի միջոցները չպետք է՝

- խոչընդոտեն ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը, փողոցների ու մայրերի անցմանը, խանգարեն փողոցների ու մայրերի մեքենայացված մաքրմանը.

- սահմանափակեն տեսանելիությունը ավտոճանապարհների վրա.

- առաջացնեն երթևեկության մասնակիցների կուրացում (լույսով, այդ թվում՝ նաև անդրադարձող).

- հանդիսանան հետիոտնի շարժմանը արգելք.

- լինեն ճանապարհների վտանգավոր հատվածներում և տեղադրվեն լուսամփոփների ու ճանապարհային կանգնակների վրա:

1.3 Կանոններին և Չափորոշիչներին համապատասխան ցանկացած տիպի գովազդի միջոցների տեղաբաշխումը (տեղադրումը) պետք է հիմնավորել համապատասխան նախագծային և տեսողական ընկալման դիտակետից:

1.4 Գովազդի տեղադրումը տրանսպորտային միջոցների վրա և պետական ավտոմոբիլային ճանապարհների հարող տարածքներում չպետք է հակասի ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 24-ի N 2137-Ն և 2005թ. դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշումների պահանջներին:

1.5 Գովազդ տեղադրել չի թույլատրվում՝

- բնակելի շենքերի մոտ, եթե դրանք հանդիսանում են աղմուկի, տատանման, հզոր ճառագայթման և էլեկտրամագնիսական դաշտի աղբյուր.

- թանգարաններում, պատմական և ճարտարապետական հուշարձանների վրա, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի վրա և դրանց տարածքում.

- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վրա և դրանց տարածքներում (պետական հաշվառման վերցրած պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցների, դրանց համակառույցների և համալիրների, իրենց գրված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքների վրա, ինչպես նաև պատմամշակութային արգելանոցներում).

- ճանապարհային ցանցում, երբ այն անհամապատասխան է ճանապարհատրանսպորտային տվյալ իրավիճակի հետ և նմանություն ունի (արտաքին տեսքով, պատկերով և ձայնային էֆեկտով) ճանապարհային նշանների, ճանապարհային երթևեկության կազմակերպման և այլ տեխնիկական միջոցների հետ.

- փողոցների խաչմերուկների սահմաններից և դրանց մոտեցումներից 25 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

1.6 Մեղրի և Ագարակ քաղաքների հրապարակներում, ինչպես նաև դրանց համար մուտքեր և ելքեր հանդիսացող տարածքների առանձին տեղերում ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի (այսուհետ՝ Բաժին) համաձայնության դեպքում կարող է տեղադրվել գովազդ, եթե այն չի խոչընդոտում ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը և հրապարակների կառուցապատման տեսողական ընկալմանը:

2. Գովազդի առանձին կանգնած մնայուն միջոցների տեսակները՝

Վահանակային կայանքները (վահանակները) տեղեկատվության համար մակերես նախատեսող կոնստրուկցիաներ են և բաղկացած են հիմքից, հիմնակմախքից (կարկաս) և տեղեկատու դաշտից.

2.1 Տեղեկատու դաշտի չափի տեսակներն են՝

- մեծ չափերի—3մ X 4մ, 3մ X 6մ և այլ չափերի
- միջին չափերի—1.8մ X 1.2մ, 2մ X 3մ
- փոքր չափերի—0.6մ X 0.9մ և ավելի փոքր չափերի.

2.2 Վահանակներին ներկայացվող պահանջներն են՝

- երկկողմանի կատարում,
- միակողմանի կատարում, որի դեպքում գովազդի հակառակ կողմը պարտադիր դեկորատիվ ձևավորում է.

2.3 մայրուղիներում մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև հեռավորությունը պետք է կազմի առնվազն՝

- 15քմ—18 քմ և այլ չափերի՝ 100 մ—150 մ
- 10 քմ—15 քմ՝ 50 մ—75 մ
- 6 քմ—10 քմ՝ 30 մ—50 մ

- 4 քմ—6 քմ՝ 20 մ—30 մ
- 2 քմ—4 քմ՝ 10 մ—20 մ
- մինչև 2 քմ՝ 5 մ—10 մ.

2.4 նեղ փողոցներում և նրբանցքներում մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև եղած հեռավորությունը պետք է կազմի առնվազն՝

- 10 քմ—12 քմ՝ 20 մ—30 մ
- 6 քմ—10 քմ՝ 15 մ—25 մ
- 4 քմ—6 քմ՝ 10 մ—20 մ
- 2 քմ—4 քմ՝ 5 մ —10 մ
- մինչև 2 քմ՝ 5 մ.

3. Շենքերի, շինությունների, ինչպես նաև Համայնքի բարեկարգման տարրերի վրա տեղաբաշխվող (տեղադրվող) արտաքին գովազդի և տեղեկատվության մնայուն միջոցների տեսակները՝

3.1. Տանիքային կայանքներ. ծավալային կամ մակերեսային կոնստրուկցիաներ են, որոնք տեղադրվում են ամբողջովին կամ մասամբ՝ շենքի ճակատային մասում կամ տանիքին:

Տանիքային կայանքները բաղկացած են կոնստրուկցիայի կրող մասի ամրակցման տարրերից և տեղեկատու կայանքից:

3.1.2. Տանիքային կայանքները պետք է ունենան հակահորդեհային և հոսանքի վթարային անջատման համակարգ:

3.1.3. Ամրակցման տարրերը, ինչպես և կոնստրուկցիայի կրող մասի հակառակ կողմը պետք է ծածկվեն դեկորատիվ պանելով:

3.1.4. Տանիքային կայանքի տեղադրման հայտերն ընդունվում են պատվիրատուի կողմից մասնագիտական փորձաքննություն անցած կոնստրուկցիաների և համաձայնեցված նախագծի առկայության դեպքում:

3.1.5. Կոնստրուկցիաների միջոցով տանիքային կայանքի գովազդային վահանակի տեղադրումը պետք է համաձայնեցվի Բաժնի հետ:

3.2 .Պատի մեծանկարներ (պաննո) կոչվում են արտաքին գովազդի այն միջոցները, որոնք տեղադրվում են շինությունների պատերին հետևյալ ձևերով՝

3.2.1. Պատկեր (տեղեկատվական դաշտ), որն անմիջապես շերտաձաձկում է պատը: Պատկերի կոնստրուկցիան հավաքվում է ամրակցման տարրերից, հիմնակմախքից և տեղեկատու դաշտից:

3.2.2. Պատի մեծանկարները կատարվում են անհատական նախագծի հիման վրա:

3.2.3. Պատի մեծանկարները պարտադիր պետք է ունենան համապատասխան փորձաքննություն անցած կոնստրուկցիաների նախագիծ:

3.2.4. Պատի մեծանկարների տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է կոնստրուկցիայի կամ անմիջական չափերով:

3.3. Բարձակ (կոնսոլային կոնստրուկցիա) են կոչվում երկկողմանի հարթակային վահանակները, որոնք ամրակցվում են կայմասյուներին կամ շենքերի վրա: Համապատասխան հիմնավորման դեպքում թույլատրվում է բարձակները տեղադրել քաղաքային լուսավորման և կոնտակտային ցանցերի կրող կոնստրուկցիաների վրա:

3.3.1. Բարձակները պետք է լինեն երկկողմանի տեսքով և ունենան ներքին լուսավորում:

3.3.2. Հիմքերի վրա (ուղղահայաց) տեղադրվող բարձակների տիպային չափեր են՝ 1.8 մ X 1.2 մ (մայրուղիների, հրապարակների համար)

- 0.6մ X 0.9մ, 1.0մ X 0.7մ (նեղ փողոցների և նրբանցքների համար) և ավելի փոքր:

3.3.3. Շահագործման անվտանգության նպատակով բարձակները տեղադրվում են հողի մակերևույթից ոչ պակաս, քան 3մ բարձրության վրա:

3.3.4. Հիմքերի վրա կանգնեցված բարձակները տեղադրվում են երթևեկելի մասից դուրս՝ մայրի կողմը: Արգելվում է մեկից ավելի բարձակների տեղադրումը մեկ հիմքի վրա:

3.3.5. Բարձակի տեղեկատու դաշտի մակերեսը հաշվարկվում է երկու կողմերի ընդհանուր մակերեսով:

4. Կրկնաձիգ գրաժապավենը (տրանսպարանտ) արտաքին գովազդի տեղեկատվության միջոց է: Այն բաղկացած է հիմքից, ամրակցման սարքավորումից և տեղեկատու պատկերից:

4.1. Գրաժապավենների հեռավորությունն իրարից պետք է լինի 50մ-ից ոչ պակաս:

4.2. Գրաժապավենների բարձրությունը պետք է լինի երթևեկության գծի համեմատ 5մ-ից ոչ պակաս:

4.3 Տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է երկու կողմերի մակերեսով:

5. Էկրանավորող սարքավորումներն արտաքին գովազդի և տեղեկատվության միջոց են:

5.1. Դրանց կոնստրուկցիան ներառում է էկրանավորող (վերարտադրող) սարքավորման մակերես (էկրան) կամ տեղեկատու պատկեր:

5.2. Հարթ պատկերների համար նախատեսված տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է էկրանավորող պատկերի մակերեսով:

6. Գովազդային վահանակների ներքևի եզրը պետք է տեղադրված լինի փողոցի մակերեսից 6մ -ից ոչ պակաս բարձրության վրա:

7. Հենասյան հիմքերը հողի ծածկույթում պետք է տեղադրվեն քաղաքաշինական նորմերին և շինարարական տեխնոլոգիաներին համապատասխան՝ մեկ ամսվա ընթացքում վերականգնելով սիզամարզի ծածկույթը:

8. Չափորոշիչներում չնշված և ՀՀ կառավարության 2002 թ. մարտի 19-ի հ. 270 որոշմամբ հաստատված ցանկում չընդգրկված 2.0 քառակուսի մետրից ավելի մակերեսով ֆիրմային նշանների և գովազդվող տարբեր ապրանքանշանների տեղադրումն իրականացվում է Բաժնի համաձայնեցմամբ:

9. Տրանսպորտային միջոցների վրա գովազդի տեղադրումը.

9.1. Տրանսպորտային միջոցների վրա գովազդի տեղադրումն իրականացվում է ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 24-ի N 2137-Ն որոշման պահանջներին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Մ.ԶԱՔԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2017 թվական N19 -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ
ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, 18-րդ հոդվածի 42-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի քաղաքային բնակավայրերում ընտանի կենդանիներին հաշվառելու և պահելու կանոնները՝ համաձայն հավելվածի:

Կողմ (10)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ


ԴԵՄ(0)

ՁԵՈՆԱՊԱԿ(0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. փետրվարի 28
ք. Մեղրի



ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ
ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ
ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԵՎ ՊԱՇՏԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

I. Ընդհանուր դրույթներ

1. ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի (այսուհետ՝ Համայնք) քաղաքային բնակավայրերում ընտանի կենդանիներին հաշվառելու և պահելու կանոններով (այսուհետ՝ Կանոններ) կարգավորվում Համայնքում քաղաքային բնակավայրերում ընտանի կենդանիներին հաշվառելու, պահելու հետ կապված հարաբերությունները, և տարածվում են . Համայնքի քաղաքային բնակավայրերում գտնվող ընտանի կենդանիներ տիրապետող (պահող) ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա:
2. Կանոնները չեն տարածվում գիտական, գիտահետազոտական, բժշկական, ինչպես նաև ծառայողական նպատակներով ընտանի կենդանիներին օգտագործող և պահող համապատասխան թույլտվություն ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա:
3. Սույն կանոններում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝
 - 1) ընտանի կենդանի (այսուհետ՝ կենդանի)՝ մարդու կողմից պատմականորեն ընտելացված կենդանի,
 - 2) գյուղատնտեսական ընտանի կենդանի՝ մարդու կողմից սննդամթերքի արտադրության համար պատմականորեն ընտելացված և բուծվող կենդանի,
 - 3) ընտանի կենդանի տիրապետող (այսուհետ՝ տիրապետող)՝ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ում հսկողության և(կամ) խնամքի ներքո գտնվում է կենդանին,

II. Տիրապետողի իրավունքները և պարտականությունները

4. Տիրապետողն իրավունք ունի՝
 - 1) հիմնել կենդանիների տիրապետողների կազմակերպություն և (կամ) անդամակցել դրան,
 - 2) ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն կենդանուն հաշվառելու և պահելու հետ կապված հարցերի վերաբերյալ,
 - 3) սույն կանոններով նախատեսված այլ իրավունքներ:
5. Տիրապետողը պարտավոր է՝
 - 1) Սույն Կանոններին համապատասխան 15-օրյա ժամկետում իրականացնել նոր ծեռք բերված կենդանու հաշվառումը,
 - 2) կենդանուն պահել դրա կենսաքանական ու անհատական առանձնահատկություններին համապատասխան և ապահովել սննդի, ջրի, քնի, շարժման, բնական ակտիվության նկատմամբ նրանց պահանջները,
 - 3) պահպանել կենդանուն պահելու սանիտարահիգիենիկ կանոնները, այդ թվում՝ իրականացնել կենդանու տարեկան պատվաստումը կատաղության դեմ,
 - 4) անհապաղ անասնաբուժական կամ առողջապահության կազմակերպություններին հայտնել կենդանու կողմից մարդու կամ այլ կենդանու

անողջությանն վնաս հասցնելու մասին՝ կենդանուն տեղափոխելով մոտակա անասնաբուժական կազմակերպություն՝ զննման և կարանտինային հսկողություն իրականացնելու համար,

5) անհապաղ անասնաբուժական կազմակերպությանը հայտնել կենդանու կատաղության հիվանդության կասկածի մասին և մինչ անասնաբույժ-մասնագետի ժամանումը մեկուսացնել կենդանուն,

6) կենդանու հիվանդությունների կանխման նպատակով իրականացնել սանիտարահիգիենիկ միջոցառումներ,

7) բացառել կենդանու կողմից ընդհանուր օգտագործման տարածքների, բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների, բակերի, մայրերի, փողոցների, սիգամարգերի, ինչպես նաև հանգստյան կանաչ գոտիների աղտոտումը,

8) կենդանուն պահելուց հրաժարվելու դեպքում այն փոխանցել այլ անձի:

Արգելվում է կենդանուն թողնել առանց հսկողության,

9) կենդանի պահելու համար ձեռք բերել համապատասխան թույլտվություն՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

10) ապահովել յուրաքանչյուր անձի անվտանգությունը և անդորրը կենդանու ազդեցությունից, այդ թվում՝ առանց դնչկալի կամ վնասագործման ապահովման դուրս հանելը,

11) պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոններով տիրապետողի համար սահմանված այլ նորմերը և կանոնները:

III. Կենդանիների հաշվառումը

6. Կենդանիների հաշվառումն իրականացվում է մարդկանց և կենդանիների համար հատկապես վտանգավոր և վարակիչ հիվանդությունների հայտնաբերման, վարակված կենդանիների հայտնաբերման ու պրոֆիլակտիկայի ենթարկելու համար:

7. Կենդանիներն հաշվառման են ենթակա սկսած վեց ամսական հասակից:

8. Հաշվառման ենթակա չեն մանր կենդանիներն ու թռչունները, որոնք պահվում են դեկորատիվ նպատակով, ինչպես նաև կենդանաբանական այգիներում պահվող կենդանիները:

9. Հաշվառումն իրականացնում է Համայնքի Ագարակ քաղաքում Ագարակի վարչական ղեկավարը, իսկ Մեղրի քաղաքում՝ Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան բաժնի աշխատակիցը՝ կենդանիների քանակի և դրանց կուտակումների վերաբերյալ օբյեկտիվ տեղեկությունների հավաքագրման միջոցով բնակչության իրավունքների և շահերի հաշվառմամբ կենդանիների պահման համար համալիր միջոցառումների պլանավորման և կատարման նպատակով:

10. Կենդանիների հաշվառումն իրականացվում է դրանց ձեռքբերման կամ Համայնքի քաղաքային բնակավայրի վարչական տարածք ներմուծման պահից 15-օրյա ժամկետում:

11. Հաշվառման արդյունքում տիրապետողին տրվում է գրանցման վկայական և անհատականացնող համար: Հաշվառման մասին նշում է կատարվում կենդանիների հաշվառման գրքում:

12. Կենդանուն անհատականացնող համարը նշվում է կենդանու վզնոցի վրա:

13. Կենդանու հաշվառման ժամանակ տիրապետողը պարտադիր պետք է ծանուցվի Կանոնների մասին, ինչը հավաստվում է տիրապետողի ստորագրությամբ: Տիրապետողն իրավունք ունի հաշվառող մարմնից անվճար տեղեկություններ ստանալ այն վայրերի մասին, որտեղ տիրապետողն իրավունք ունի կազմակերպել կենդանու զբոսանքը կամ արոտը, ինչպես նաև այն վայրերի մասին, որտեղ թույլատրված է կենդանիների թաղումը:

14. Կենդանու մահվան կամ սպանդի դեպքում կենդանու նախկին տիրապետողը

պարտավոր է հաշվառող մարմին հանձնել գրանցման վկայականը, ինչի մասին նշում է կատարվում գրանցման գրքում:

15. Կենդանուն այլ անձի տիրապետությանը հանձնելու դեպքում նոր տիրապետողին են հանձնվում կենդանուն անհատականացնող համարի նշումով կենդանու վզնոցն և գրանցման վկայականը՝ կենդանու հետագա վերահաշվառում իրականացնելու համար:

16. Գրանցման գրքում նշվում են հետևյալ տեղեկությունները՝

- 1) գրառման հերթական համարը և հաշվառման տարեթիվը,
- 2) տիրապետողի անունը, ազգանունը, բնակության հասցեն, անձնագրի տվյալները,
- 3) կենդանու տեսակը, անունը, սեռը, գույնը, ցեղատեսակը, ծննդյան թիվը (եթե հայտնի է),
- 4) գրանցման վկայականի տրամադրման ամսաթիվը և հերթական համարը,
- 5) կենդանու անհատականացնող համարը,
- 6) տիրապետողի մոտ գտնվող կենդանիների թվաքանակը,
- 7) այլ տեղեկություններ:

18. Գրանցման վկայականի կորստյան դեպքում տիրապետողի դիմումի հիման վրա նրան տրվում է գրանցման նոր վկայական:

IV. Կենդանիներին պահելու, զբոսանքի իրականացման և վաճառքի պայմանները

19. Ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են կենդանիներին պահելիս հաշվի առնել այդ կենդանիների կենսաբանական և անհատական առանձնահատկությունները, պահպանել օրենսդրությունը, ինչպես նաև այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

20. Բնակելի շենքերում կենդանիներ մշտապես կամ ժամանակավորապես պահելիս պետք է ապահովվեն մարդկանց և կենդանիների կյանքի բարենպաստ պայմաններ:

21. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքներում կենդանիներ պահելն արգելվում է:

22. Կենդանիների զբոսանքը թույլատրվում է միայն այդ նպատակով հատուկ հատկացված տարածքներում: Նման տարածքների բացակայության դեպքում զբոսանքը կարող է իրականացվել ամառի կամ խոտածածկ տարածքներում, բացառությամբ կրթական, մշակութային, սպորտային, առողջապահական կազմակերպություններին (հիմնարկներին) հարող տարածքների, մանկական հրապարակների և շուկաների տարածքների:

23. Շների զբոսանքն իրականացնելու ժամանակ տիրապետողը պետք է ապահովի շրջապատող անձանց անվտանգությունը:

24. Շների զբոսանքի ժամանակ տիրապետողը պարտավոր է՝

1) շանը տարածքից դուրս բերել կամ ներս տանել կապով, որի երկարությունը թույլ է տալիս հսկել շան վարքը: Մարդկանց և ուրիշ կենդանիներին սպառնացող շները (մարտական, ծառայողական, պարեկային և այլ ցեղատեսակի շներ, որոնք կարող են լինել ագրեսիվ և վտանգավոր մարդու կամ այլ կենդանու կյանքի կամ առողջության համար, այսուհետ՝ ագրեսիվ շուն) պետք է ունենան դնչկալներ: Ագրեսիվ շների ցանկը սահմանում է Համայնքի ղեկավարը:

2) ագրեսիվ շանը պահել դնչկալով՝ մայթերով շարժման ժամանակ, հետիոտնի ճանապարհին, մարդաշատ վայրերում և երթևեկության հատման մասերում:

Բնակելի թաղամասերում ագրեսիվ շների զբոսանքը թույլատրվում է իրականացնել միայն դնչկալի և կապի առկայության դեպքում: Հասարակական վայրերում տիրապետողը պետք է ագրեսիվ շանը պահի կարճ կապի վրա և դնչկալով:

3) առանց դնչկալի և կապի շանը զբոսանքի տանելու առանձնացված վայրերը

սահմանվում են Համայնքի ղեկավարի կողմից:

25. Ճանապարհը կամ երթևեկելի մասն անցնելիս, ինչպես նաև մայրուղիների մոտ՝ ճանապարհային պատահարների կանխման նպատակով, տիրապետողը պարտավոր է կենդանուն պահել կարճ կապի վրա:

26. Տիրապետողները պարտավոր են թույլ չտալ մայրերի կամ այլ հանրային օգտագործման տարածքների աղտոտումն կենդանու զբոսանքի ընթացքում, ինչպես նաև պարտավոր են մաքրել դրանց կենսագործունեության արդյունքները:

27. Շներ տիրապետողներն իրավունք ունեն դրանց ազատ արձակել միայն սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հատուկ առանձնացված տարածքներում կամ մեկուսացված շինություններում:

28. Կենդանիների վաճառքը թույլատրվում է իրականացնել մասնագիտացված խանութներում, կենդանիների շուկաներում կամ այդ նպատակի համար հարմարեցված հատուկ առանձնացված վայրերում՝ անասնաբուժական հատուկ վկայականի առկայության դեպքում:

29. Հասարակական վայրերում (խանութների հարևանությամբ, այգիներում, կայարաններում, գյուղատնտեսական արտադրանքի և սպառողական ապրանքների շուկաներում, տոնավաճառներում և այլն) կենդանիների վաճառքն արգելվում է:

30. Տիրապետողներն իրավունք ունեն կենդանիներին տեղափոխել քաղաքային տրանսպորտով: Շները պետք է քաղաքային տրանսպորտով փոխադրվեն կարճ կապով և դնչկալով, բացառությամբ փոքր դեկորատիվ ցեղատեսակների և փոքր առանց ցեղատեսակի շների, որոնք տեղափոխվում են պայուսակներում կամ տեղափոխման համար հարմարացված սարքերում:

31. Արգելվում է՝

1) կենդանուն գրգռել մարդկանց և կենդանիների վրա,

2) կռիվների կամ ներկայացումների համար կենդանիների օգտագործումը, որոնց արդյունքում կենդանին կարող է տանջվել, ցավեցվել, վնասվել կամ սպանվել,

3) կենդանիների երկարատև կամ մշտապես պահումը տրանսպորտային միջոցներում,

4) անհամատեղելի տեսակների միևնույն տարածքում կամ միևնույն տարածքում միևնույն տեսակների բնակեցումը, որոնց միջև կարող է առաջանալ ագրեսիվություն,

5) շանը զբոսանքի տանելը մանկական հրապարակներում, առողջապահական, կրթական, մշակույթի, սպորտի հիմնարկների և շուկաների տարածքներում,

6) հարբած անձանց և 14 տարին չլրացած անչափահասներին 15 կիլոգրամից ավելի քաշ ունեցող շներին զբոսանքի տանելը:

7) կենդանիների հետ խանութներ, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների օբյեկտներ, բժշկական, կրթական և մշակութային հաստատություններ այցելելը, բացառությամբ կենդանիների ցուցադրության կամ համանման այլ միջոցառումների այցելության դեպքերի:

V. Կենդանիների դիերի թաղումը և թափոնումը

32. Տիրապետողները իրավունք ունեն թաղելու և թափոնելու իրենց պատկանող կենդանիների դիերը:

33. Կենդանիների դիերի թաղումն իրականացվում է այդ նպատակով երևանի քաղաքապետի կողմից հատուկ առանձնացված վայրերում՝ սահմանված սանիտար-հիգիենիկ կանոններին համապատասխան:

VI. Գյուղատնտեսական ընտանի կենդանիներ պահելու առանձնահատկությունները

34. Գյուղատնտեսական ընտանի կենդանիներ պահելու վերաբերյալ սույն Կանոնների դրույթները տարածվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն գլխի դրույթներին:
35. Համայնքի քաղաքային բնակավայրերում կենդանի պահելու թույլտվությունը տալիս է Համայնքի ղեկավարը:
36. Կենդանի պահելու թույլտվությունը կարող է տրվել այն անձին, ով բնակվում է առանձնատանը և ունի գյուղատնտեսական ընտանի կենդանի պահելու համար անհրաժեշտ պայմաններ:
37. Կենդանիների զբոսանքը կամ արոտը կարող է կազմակերպվել տիրապետող անձի հսկողության ներքո՝ միայն դրա համար հատուկ նախատեսված վայրերում:
38. Արգելվում է կենդանու ազատ կամ կապված արոտն դրա համար չհատկացված վայրերում (փողոց, զբոսայգի, պուրակ, տնամերձ տարածք և այլն):
39. Տիրապետողները պարտավոր են հիվանդությունների կանխման նպատակով ապահովել համապատասխան անասնաբուժական միջոցառումների իրականացումը, թույլ չտալ շրջակա միջավայրի աղտոտումը կենդանիների կենսագործունեության արդյունքներով:
40. Մեղվապահները պարտավոր են մեղուները պահել իրենց տարածքներում, որոնք պետք է սահմանազատված լինեն երկու մետրից ոչ պակաս բարձրության պարսպով:

VII. Կանոնները խախտելու պատասխանատվությունը

41. Սույն կանոնների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

VIII. Անցումային դրույթներ

42. Տիրապետողները պարտավոր են հաշվառել իրենց տիրապետության ներքո գտնվող կենդանիներին՝ Կանոններն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Մ. ՔԱՔԱՐՅԱՆ